31.10.2022
350-75

Շիրակի մարզպետ
Նազելի Բաղդասարյանին

Տեղեկություն ստանալու հարցում

Հարգելի տիկին Բաղդասարյան,

2022 թվականի հոկտեմբերի 7-ի N 350-66 տեղեկություն ստանալու հարցմամբ Ինֆորմացիայի ազատության կենտրոնը դիմել էր Ձեզ՝ խնդրելով տրամադրել Գյումրու թիվ 32 դպրոցում ՀՀ Շիրակի մարզպետի հրամանով 2018 թվականին անցկացված աուդիտորական ստուգման արդյունքների ակտը և մասնագիտական եզրակացությունը: Պատասխան գրությամբ մարզպետարանը հայտնել է, որ փնտրվող տեղեկատվությանը ՀՀ Շիրակի մարզպետարանը չի տնօրինում:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ *«10. Եթե տեղեկատվություն տնօրինողը չունի փնտրվող տեղեկությունը, կամ դրա տրամադրումն իր լիազորությունների շրջանակից դուրս է, ապա նա տվյալ գրավոր հարցումն ստանալուց հետո՝ 5-օրյա ժամկետում, պարտավոր է այդ մասին գրավոր տեղեկացնել դիմողին, իսկ հնարավորության դեպքում նրան տրամադրել նաև այդ տեղեկատվությունը տնօրինողի (այդ թվում՝ արխիվի) գտնվելու վայրը, որն ունի փնտրվող տեղեկությունը:»:*

Ձեր պատասխան գրության մեջ բացակայում է հղումը տեղեկատվություն տնօրինող այն մարմնին, որն ունի փնտրվող տեղեկությունը:

Միաժամանակ, նույն պատասխան գրությամբ «Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքի դրույթների վկայակոչմամբ նշել եք ներքին աուդիտորների կողմից աշխատանքի ընթացքում ստացած տեղեկությունների պահպանության, իսկ «Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի դրույթների վկայակոչմամբ՝ հաշվապահական հաշվառման փաստաթղթերում, գրանցամատյաններում և ներքին օգտագործման համար պատրաստված հաշվետվություններում պարունակվող տեղեկությունների՝ առևտրային գաղտնիք լինելու մասին:

Հաշվի առնելով, որ ըստ մարզպետարանի գրության՝ ՀՀ Շիրակի մարզպետարանը չի տնօրինում հարցմամբ փնտրվող տեղեկությունը, ապա ո՞րն է ներքին աուդիտորների աշխատանքի ընթացքում ստացված տեղեկությունների պահպանման/գաղտնի լինելու կամ հաշվապահական հաշվառման փաստաթղթերում

գրանցամատյաններում և ներքին օգտագործման համար պատրաստված հաշվետվություններում պարունակվող տեղեկությունների՝ առևտրային գաղտնիք լինելու մասին վկայակոչումների նպատակը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 42-րդ և 51-րդ հոդվածներով և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածով և 9-րդ հոդվածի 10-րդ մասով՝ խնդրում ենք հայտնել, թե տեղեկություն տնօրինող որ մարմինն ունի Գյումրու թիվ 32 դպրոցում ՀՀ Շիրակի մարզպետի հրամանով 2018 թվականին անցկացված աուդիտորական ստուգման արդյունքների ակտը և մասնագիտական եզրակացությունը:

Խնդրում ենք տեղեկություն ստանալու հարցմանը պատասխանել «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածով սահմանված կարգով և ժամկետներում:

Ուշադրություն: Խնդրում ենք հարցմանը պատասխանել բացառապես էլեկտրոնային եղանակով:

Հարգանքով՝

ԻԱԿ նախագահ Շուշան Դոյդոյան